

ՁԵԻՎՎՈՐԵԼ ՊԱՏԱՍԽԱՆԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԸ

Posted on August 1, 2018 by Keghart



Category: [Opinions](#)



Հայկական Վերածնունդ սփյուռքյան կազմակերպությունը սատարում է Երկրորդ Նախագահի կալանավորումը

[Հայկական Վերածնունդ](#), 31 հուլիսի, 2018 թ.

Հայկական Վերածնունդ սփյուռքյան կազմակերպությունը ողջունում է ՀՀ երկրորդ Նախագահ Ռոբերտ Զոչարյանին քրեական պատասխանատվության ենթարկելու և 2008թ. մարտի 1-ի առնչությամբ սահմանադրական կարգի տապալման մեջ մեղավորների բացահայտման գործընթացը:



ՀՀ իշխանության որդեգրած իրավունքի, սահմանադրության և ժողովրդավարության գերակայությունը համարում ենք թավշյա հեղափոխության մեծագույն ձեռքբերումը: Ողջունում ենք Նոր Հայաստանում օրենքի հավասարության սկզբունքի ներդրմանն ուղղված իշխանության ջանքերը: Հույս ենք հայտնում, որ մոտ ապագայում արդարադատությունից չեն խուսափի նաև ընտրակեղծարարության միջոցով իշխանությունը յուրացրած առաջին և երրորդ նախագահները, ինչպես նաև նրանց օժանդակող բոլոր պատասխանատուները:

Հայկական Վերածնունդ սփյուռքյան կազմակերպությունը սատարում է Երկրորդ Նախագահի կալանավորումը

[Հայկական Վերածնունդ](#), 31 հուլիսի, 2018 թ.

Հայկական Վերածնունդ սփյուռքյան կազմակերպությունը ողջունում է ՀՀ երկրորդ Նախագահ Ռոբերտ Զոչարյանին քրեական պատասխանատվության ենթարկելու և 2008թ. մարտի 1-ի առնչությամբ սահմանադրական կարգի տապալման մեջ մեղավորների բացահայտման գործընթացը:



ՀՀ իշխանության որդեգրած իրավունքի, սահմանադրության և ժողովրդավարության գերակայությունը համարում ենք թավշյա հեղափոխության մեծագույն ձեռքբերումը: Ողջունում ենք Նոր Հայաստանում օրենքի հավասարության սկզբունքի ներդրմանն ուղղված իշխանության ջանքերը: Հույս ենք հայտնում, որ մոտ ապագայում արդարադատությունից չեն խուսափի նաև ընտրակեղծարարության միջոցով իշխանությունը յուրացրած առաջին և երրորդ նախագահները, ինչպես նաև նրանց

Ժմանդակող բոլոր պատասխանատուները:

Արդարության վերականգման գործընթացը չպետք է կանգ առնի Նույնիսկ այնպիսի Նախկին պաշտոնյաների առջև, ովքեր դրական ներդրումներ են ունեցել, սակայն ոտնձգություններ են կատարել ՀՀ սահմանադրության, Ժողովրդի ազատ կամքի և ընտրության իրավունքի վրա: Հասարակությունը պետք պատրաստ լինի Նույնիսկ «հերոսների» ապահերոսացմանը, եթե օրենքի գերակայությունը և արդարությունը դա են պահանջում:

ՀՀ քաղաքացիների և սփյուռքի հայրության գերակշռող մասի վստահությունը և աջակցությունը վայելող վարչապետ Նիկոլ Փաշինյանի կառավարությունը, ունենալով լեգիտիմության աննախադեպ աստիճան, ընձեռնվել է եզակի պատմական հնարավորություն ՀՀ-ում ապօրինի իշխանություն ձևավորելու պրակտիկան իսպառ արմատախիլ անելու և տասնամյակներով ձևավորված կոռուպցիայի բուրգը կազմաքանդելու համար:

Համոզված ենք, որ Հայաստանի կայուն զարգացման, անվտանգության և մեծ հայրենադարձություն իրականացնելու համար խիստ անհրաժեշտ է ունենալ Ժողովրդավարական, իրավունքի և օրինականության պետություն: Այդ նպատակով կարևորում ենք պատասխանատվության ինստիտուտի ձևավորումը, որը ենթադրում է բոլոր մեղավորների բացահայտման անաչառ, թափանցիկ և հետևողական դատաքննություն: Համոզված ենք, որ պատասխանատվության ինստիտուտը կնպաստի ոչ միայն մեր երկրի զարգացմանը, այլ նաև նրա միջազգային վարկի բարձրացմանը:

